ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 դեկտեմբերի 2021թ. թիվ 823-Ա

Վ. ՄԽԻԹԱՐՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածի 1-ին կետի, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Վաչագան Մխիթարյանին 2021թ. դեկտեմբերի 17-ից ազատել «ՀՀ Լոռու մարզի Ձրաշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնից և լուծել նրա հետ 2016 թվականի դեկտեմբերի 16-ին կնքված աշխատանքային պայմանագիրը:

2. «ՀՀ Լոռու մարզի Ձրաշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հաշվապահին՝

Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 130-րդ հոդվածով սահմանված կարգով Վաչագան Մխիթարյանի հետ կատարել վերջնահաշվարկ:

3. Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետին՝

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով սույն վարչական ակտը ստորագրվելուց հետո էլեկտրոնային փոստի միջոցով կամ առձեռն ծանուցել հասցեատիրոջը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

12/13/2021

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2021թ. դեկտեմբերի 13
ք.Վանաձոր